ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 10.05.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 42/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 22.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 04.05.2016թ. թիվ 09/649 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Խաչպար» ՍՊԸ-ի 04.05.2016թ. Կենտրոնին ներկայացված դիմումը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 06.05.2016թ. ներկայացրած եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական սարքավորումների, գործիքներ և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/16-13-2016 (ԵՊԲՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին 06.04.2016թ. թիվ 1 որոշումը դադարեցնելու պահանջի մասին

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 22.04.2016թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Գրիգորյան Գոռ**

Բաբայան Վահե